ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

գր. 01.09.2014թ. կոդ՝ 11714399

«29» օգոստոսի 2014թ

# ՀՐԱՄԱՆ

№ 232-Ն

## ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԴՈՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ, ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված Հավելվածի 7-րդ և 10-րդ կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել պետական [illegible] ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի թիվ 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու ցանկություն ունեցող ծառայողների կողմից ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 8-ը՝ ժամը 18:00:
3. Հաստատել գերատեսչությունների կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարություն ներկայացվող գերատեսչական տեղեկանքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Սույն հրամանի 3-րդ կետում նշված գերատեսչական տեղեկանքների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի սեպտեմբերի 10-ը՝ ժամը 18:00:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«29» VIII 2014թ.

ք. Երևան

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2014 թվականի օգոստոսի 29 թիվ 232-Ն հրամանի

# ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում բնակարան գնելու պայմաններին բավարարող հավակնորդների վերաբերյալ**

_______________________________
(Գերատեսչության անվանումը)

Աղյուսակ 1:

| Բնակարան գնելու հավակնորդների ընդհանուր թիվը՝ ըստ անձի | Հավակնորդների ընդհանուր թիվը՝ ըստ սենյակների | | | |
|---|---|---|---|---|
| | Մեկ | Երկու | Երեք | Չորս |
| | | | | |

Աղյուսակ 2:

| Հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը | Հավակնորդի ընտանիքի կազմը | Հավակնորդի պաշտոնը, աշխատանքային ստաժը | Հավակնորդի անձնագրային տվյալներ | Հավակնորդի էլեկտրոնային հասցեն | Հավակնորդի հեռախոսահամարը | Հավակնորդի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Սույն տեղեկանքին կից ներկայացվում են հավակնորդների կողմից ներկայացված դիմում-հայտերը և դրանց կից փաստաթղթերը:

_______________________________
(Տեղեկանքը կազմելու ամսաթիվը)

_______________________________
(Գերատեսչության աշխատակազմի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

Սույն դիմում-հայտով հայտնում եմ, որ ցանկություն ունեմ մասնակցելու Ծրագրի շրջանակներում բնակարանների ձեռքբերման գործընթացին, ծանոթացել եմ ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի 821-Ն որոշմամբ սահմանված պայմաններին և սույն դիմում-հայտը ներկայացնելով՝ ընդունում եմ ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված Հավելվածով նախատեսված քաղաքացիաիրավական հարաբերությունների պետության առաջարկած պայմանները՝ ներառյալ տուգանային պատասխանատվության պայմանները:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստում ենք, որ սույն դիմում-հայտով և դիմում-հայտին կից ներկայացվող բոլոր տվյալները համապատասխանում են իրականությանը:

____________________
(Դիմում-հայտը ներկայացնելու ամսաթիվը)

____________________
(Դիմում-հայտը ներկայացնողի անուն,ազգանուն, ստորագրություն)

____________________
(Ծառայողի Ընտանիքի անուն,ազգանուն, ստորագրություն)

Դիմումն ընդունեց՝ ____________________
(Դիմումն ընդունողի անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն)

✂-----------------------------------------------------------------------

Ներկայացվել է դիմում ________________-ի կողմից
(Դիմում-հայտը ներկայացնողի անուն,ազգանուն)

Ստացվել է ____________________ կողմից «___» ________ 201 թ.
(Դիմումն ընդունողի անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն)

№ ______

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2014 թվականի օգոստոսի 29 թիվ 232-Ն հրամանի

______________ աշխատակազմի ղեկավար
(Գերատեսչության անվանումը)

պարոն/տիկին ______________ -ին
(աշխատակազմի ղեկավարի անունը և ազգանունը)

______________ -ից
(Դիմում-հայտ ներկայացնողի անուն, ազգանուն)

№ ______

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

**պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի թիվ 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու**

| Ծառայողի անունը, ազգանունը և հայրանունը | Ծառայողի ընտանիքի կազմը | Ծառայողի պաշտոնը, աշխատանքային ստաժը | Ծառայողի անձնագրային տվյալներ | Ծառայողի էլեկտրոնային հասցեն | Ծառայողի հեռախոսա համարը | Ծառայողի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Սույն դիմում-հայտին կից ներկայացնում եմ՝

1. աշխատանքային գրքույկի պատճենը՝ կազմված ___ էջից,
2. ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ կազմված ___ էջից,
3. ամուսնության, ամուսնալուծության, հայրության ճանաչման վկայականների պատճենները՝ կազմված ___ էջից,
4. Ծրագրի վարկատու կազմակերպության գրավոր համաձայնությունը՝ Ծառայողի և (կամ) Ծառայողի ընտանիքի անդամին կոնկրետ սահմանաչափով վարկի տրամադրման պատրաստակամության մասին՝ կազմված ___ էջից: